

ըր ինչուան կոկորդին հասցընելով ա-  
րիւնախառն կանաչ մաղձ կը ժայթքեն :  
Երբ գլուխնին ցաւի՝ ճակատնուն վը-  
րայ ճեղք մը կ'ընեն . նոյնպէս կ'ընեն  
թեւերնուն ու սրունքներնուն վրայ և  
մարմնոյն ամէն կողմէն արիւն կը հա-  
նեն : ( ) Եր մը բռնած հսկանիս, որ նա-  
ւուն մէջն էր, կ'ըսէր որ ունեցած ա-  
րիւնը չէր ուզեր ալ իր տեղը կենալ, և  
ասոր համար հիւանդութիւն կը պատ-  
ճառէր իրեն : Ետնք մազերնին աբե-  
ղաներու նման կը կտրեն, թէպէտ քիչ  
մ'աւելի երկայն . ծամակալնին բամ-  
բակէ հիւսուած է, որուն հանգուցին  
մէջ կը խօթեն իրենց փքինները երբ  
որսի կ'երթան : Եթէ մէկը մեռնելու  
ըլլայ, կ'ըսեն թէ 10 կամ 12 դե կ'ե-  
րեան օդուն մէջ, որոնք կը ցատկեն  
կը պարեն դիակին չորս կողմը, և որոնք  
մարմիննին ներկած են, և թէ աս սա-  
տանաներէն մէկը աւելի մեծ է, որ  
մեծ հանգէս և ուրախութիւն կ'ընէ .  
այս մեծ սատանան Սէդէպոն կ'անուա-  
նեն իրենք, կրտսերներն ալ Քէլէ-  
՝ հսկայն՝ որ մեր նաւն էր, նշաններով  
կը յայտնէր որ տեսեր էր ինքը աս սա-  
տանաները, գլխընուն վրայ երկու կու-  
տոյ, մազերնին ցոտս երկայն, և բե-  
րաններնէն ալ կրակ թափելով : Եթէ  
նաւապետը խաղակոնք անուանեց այս  
ժողովուրդները, որոնց մեծ մասը վե-  
րոյիշեալ կենդանւոյն մորթը կը հագ-  
նէին . հաստատ բնակութիւն չունին,  
հապա այն կենդանւոյն մորթէն հիւղի  
պէս բան մը կը շինեն, և տեղէ տեղ  
կը փոխուին միշտ . իրենց պարէնն է  
հում միս և քաղցր արմատ մը զոր կը  
կոչեն գաբար : Երբ հսկային օրուան  
մէջ կերածն էր զամբիւղ մը պաքսի-  
մատ և կէս դոյլ ջուր :

Կը շարունակուի :

### Փաշտոնս Բոզգանդացի :

Սամանակը, որ իր հնութեամբը  
տեսակ ճշմարտութեանց վրայ երկ-

բայելի քող մը կը ձգէ, որով չէնք կըր-  
նար զանոնք պարզապէս ակն յայտնի  
նկատել, կը տեսնենք որ նոյն մթին քո-  
ղը նաև Փաւստոսի խաղանդացոյ կե-  
նացն ու անոր հանգամանացը վրայ ձը-  
գած է . և երեք տեսակ ճշմարտութի  
աղօտ անստուգութեան մը ներքեւ ծած-  
կուած կը գտնենք : Եւ իրեն ինչ  
ազգէ ըլլալը, երկրորդ ինչ լեզուով մա-  
տենագրելը, և երրորդ երկասիրութե  
ամբողջութիւնը : Եւ որովհետեւ ըստ  
գեղեցիկ հայկաբան ոճոյն՝ ոչ աննշան  
հատոր մըն է իր գրուածքը մեր մատե-  
նագրութեան մէջ, կ'արժէ որ մենք  
ալ ուրիշ մատենագրաց մէջ եղած յի-  
շատակութիւններն քննելէն վերջը, ու-  
շի ուշով ընթեռնումք նաև իր պատ-  
մագրութիւնը, ունեցած տարակոյսնիս  
ըստ կարի պարզելու համար :

Երբ գալով մեր առաջին խնդրոյն,  
կը տեսնանք որ Փաւստոս իր ժամանա-  
կին պատմութիւնը պատմելու ատենը  
կը խոստանայ նաև իր վրայ տեղեկութի  
տալ, բայց դեռ խոստացած տեղը չհա-  
սած, և և Զ գլուխներուն մէջ, Պար-  
սից ձեռքին տակ եղած հայոց մասին ե-  
րեւելի եպիսկոպոսները յիշատակելով,  
այսպէս կը գրէ . (Դպր. Զ. Գլ. Ե.)

“Եւ առ այնմ ժամանակաւ Փաւստոս  
եպիսկոպոս . սա՛ի ժամանակս՝ Երեսօսի  
եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին  
իբրև թելակալ, . ուր ուրիշ եպիսկո-  
պոս մըն ալ յիշելէն ետև կ'աւելցընէ :  
“Եւ էին սոքա ի տեսչութի աղքատա-  
նոցացն հաւատացեալք, և յամենայնի  
էին հաւատարիմք նորա ի ժամանակս  
նորա, և յամ Խոսրովու և Երշակայ  
երկուց թագաւորացն բաժանաւորացն,  
մինչ դեռ ևս կային նոքա կենդանիք” :

Երբ թէ որ այս յիշատակութեամբս  
մէկը, զնոյն ինքն մատենագիրը իմանայ,  
հաւանականաբար յոյն է պիտի գուրցէ,  
որովհետեւ նոյն գլուխներուն մէջ դար-  
ձեալ յիշելով զնոյն Փաւստոսը և անոր  
մէկ եղբայրը կ'ըսէ “ և էին սոքա ազ-  
գաւ հռոմ” :

Եւ այս ասոնցմէ աւելի համազորական  
տեղեկութիւն մը կրնան ընթերցողք



գտնալ իր երրորդ դպրութեան վերջի ծանօթութեանը մէջ, այսպէս ըսելը .  
 “Սատարեցաւ երրորդ դարը, քսան և մի պատմութեանց դպրութիւնք, ժամանակագիր կանոնք փախստեայք (Իւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր (Յունաց , :

Եթէ այս ալ բաւական չսեպէ հետաքնին ընթերցող մը այս խնդիրս պարզելու, մենք որ այս երկու իրաւամբ տարակուսելի խնդրոց մէջէն աւելի հաւանականը կը փափաքինք պարզել և ոչ վճիռ կտրել որոշակի, կը հրաւիրեմք զընթերցողս մէյմը ձեռք առնել իր մատենագրութիւն ու հոն, եթէ հայրենասէր է ընթերցողը, թող անտարբեր աչքով թէ կարենայ կարգայ փոխանակ փառաց և պատուոյ ազգին՝ նախատինք և արհամարհանք, և փոխանակ թող՝ Վերդ Ռեր, Երէնի Ռեր հայրենի, Լափառն աշխարհին հայոց կարգալու, ընթերցող, թող՝ Վերդ Ռեր Երէնի հայոց, Լափառն աշխարհին հայոց, համար որ ազգ Գանն հայոց Երէնի և այլն :

Յիրաւի թէպէտ նոյն ժամանակները ոչ սակաւ խառնակութիւնք կը ներդէին զհայաստան, և թագաւորական արքունիքը՝ Տիրանայ, Արշակայ և Պապայ անօրէնութիւններովը զեղծած էր, բայց ո՞ր է այն ազգային պատմագրաց ընտանի տրտմախառն հառաչանքը, որոնք այն ողորմելի անցից վրայ յիշատակութիւն մը ընելով, հանդերձ ցաւով կը խոստովանին մեր նախնեաց ումանց թիւր ճամբան, առանց մեղադրելու բոլոր ազգը, մանաւանդ առանց ներկային թերութիւնքը անցելոյն հետ շփոթելու : Իայց հարկ չէ երկայն խօսքով անոնց անտեղութիւնը ցուցնել . ահաւասիկ մէկ օրինակ մը միայն ի բազմաց կը գնենք հոս, ըսածնուս ճշմարտութիւնն հաստատելու համար . թող ինքնին Ռուզանդ խօսի, եթէ հայ և ճշմարտապատում վիտապիր է :

“Յայնմ ժամանակի զթագաւորն իւրեանց օրինակ չարի առնէին, և նովին օրինակաւ ձեւել սկսան, և նոյնպէս գոր-

ծել : Օհ ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն, լոկ միակ իբրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմնաւորն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ : . . . Սասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս և եթ զըօսեալ էին . զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանգութեանն և ընդ տըղայութեանն խաղալիկ խանկարեալք, և զպիտոյիցն և զկարեւորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս և դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով : ” ( Գալ. Գ. Գ. ԺԳ. )

Իս հատուածիս վրայ աւելորդ կը սեպենք ընթերցողաց անդրադարձնել Ռուզանդայ ազգերնուս դէմ ունեցած ատելութիւնն, որ ի վաղնջուց հետէ ի հայաստան եղած քրիստոնէութիւնն անգամ ի հարկէ իմն և մարդկային կրօնք և մոլորութիւն մը կը սեպէ . կը ձգենք որ ընթերցողք իմաստասիրեն :

Իսկ ո՞ր թողունք իր այն առասպելախառն պատմութիւններն և ժամանակագրական յայտնի սխալները, որով և մեր Սովսէս Խորենացի խոհական պատմագիրը կը զգուշանայ իրմէ բան մը առնելու : Վազար փարպեցին ալ յանհնարս մտնելով, Ռուզանդայ սրտայօդ պատմութեանց, ժամանակագրական անճշդութեանց մեկնութիւն մը տալու համար, անոր Ռուզանդիոն սորվիլը մէջ բերելով, ուր գիտութիւնք քան այլ ամէն տեղ աւելի ծաղկած էին ասանկ կը գրէ . “Արդ յայնպիսում քաղաքի, և ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ, վարժեալ այրն (Փաւստոս այն պիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաբանս կարգէր ի պատմութեան իւրութեալ և մի լիցի . ուստի և անհաւատալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն՝ ասեմ թէ գուցէ այլ ոչ յանդուգն և անհրաժանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ՝ յիւրնս գրեաց զինչ



պէտս ըստ կամի . և կամ զի ուրուք ան-  
կարեալ դիպողս՝ այլաբանեալ փնա-  
սեաց . և անուամբ Փաւստոսին՝ զիւրոյ  
յանդգնութեանն սխալանս համարե-  
ցաւ ծածկել . և այն յայտնի ցուցանի  
ամենայն հայցողաց . քանզի են ոմանք  
'ի Յոյնս , այլ մանաւանդ առաւել յԱ-  
սորիս , : Բայց ուշիմ ընթերցողը յայտ-  
նի կը տեսնէ որ թէպէտ Փարպեցին  
կ'ուզէ արդարացնել զՓաւստոս , այլ  
'ի զուր : Իսկ այն վերջի խօսքովն թէ  
են ոմանք 'ի Յոյնս , կարծես թէ կ'ուզէ  
ըսել թէ իր կարծեօք ըսած խօսքին վը-  
րայ չզարմանանք , որով ուշիմ քննադա-  
տից կը թողու իրեն ճշմարտութիւնը  
քննելը . վասն զի , ինչպէս գիտենք ,  
նոյն միջոցին կար Յունաց մէջ այս սո-  
վորութիւնս : Իսկ զարձեալ կերպով  
մը Բուզանդացւոյն ինչ ազգէ ըլլալն  
ալ կը ծանուցանէ մեզի : Բայն կարծիքն  
ալ թէ Բուզանդայ գրքին մէջ ծայրէ  
'ի ծայր ձեռք խառնուած , և հեղինա-  
կին գրածները եղծած ու ստայօդ պատ-  
մութիւններ աւելցուած ըլլայ , ամե-  
նեւին անտեղի է . վասն զի գրութեան  
ոճոյն մէջ այնպիսի հետք մը չտեսնուիր .  
մանաւանդ այնչափ դոյզն ժամանակի  
տարբերութեան մէջ . որովհետեւ Բու-  
զանդայ և Փարպեցւոյն մէջ եօթանա-  
սուն տարւոյ տարբերութիւն հազիւ  
կայ : Իսկ Բուզանդայ 'ի Բիւզանդիոն  
հրահանգեալ ըլլալը ամենեւին պատ-  
ճառ մը չէ որ անով խոհական ճշմար-  
տասէր և երևելի մատենագիր մը ըլ-  
լայ , թէ որ նոյն ջանքը ունեցած չըլլայ  
հանձարաւոր մատենագիրը :

Բայց Փաւստոսի ազգութեան վրայ  
իրաւամբ տարակուսիլ կուտայ մեզի իր  
երրորդ դպրութեան մէջի ( Գլ . ԺԲ . )  
այն խօսքը , ուր իւրաքանչիւր ցեղի նա-  
խարարութիւնները յիշելու ատեն կ'ը-  
սէ . “ Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն  
Սահառունեաց , : Բայց ասիկայ յայտ-  
նի ձեռագրաց վրիպակ կը տեսնուի .  
վասն զի այն տեղը կարծես թէ բնական  
կուգայ որ դնէր Սահառունեաց տոհմի  
իշխանին անունը , ինչպէս որ խօսուած-  
քին ու պատմութե կարգը կը բերէր .

վասն զի հոն նախ այսպէս կը գրէ .  
“ զՍորութ իշխանն Զորոց աշխար-  
հին , և զՍանասպ զԽորխուռունեաց  
զիշխանն Սաղխազունեան տանն , և ըզ-  
մերոյ տոհմի ազգի իշխանն Սահառու-  
նեաց և զԼաւ իշխանն Գնունեաց , :  
Լաւ եթէ Փաւստոս գիտուն և տե-  
ղեակ էր ուրիշ ցեղերու իշխաններուն  
և յականէ յանուանէ զանոնք կը դնէ ,  
ևս առաւել որոշակի պիտի դնէր իր  
տոհմի իշխանին անունն ալ , եթէ Սա-  
հառունեաց ցեղէն ըլլար : Լաւ բանս ա-  
ւելի ևս կրնայ մէկը ստուգել թէ որ  
դիտելու ըլլայ թէ իր պատմութեան  
մէջ ուրիշ տեղեր ինչ կերպով Սահա-  
ռունեաց տոհմին յիշատակութիւն կ'ը-  
նէ , և կը գտնէ երեք այլ և այլ տեղեր  
այսպէս . ( Դպր . Գ . Գլ . ԺԴ . ) “ Եւ  
յղեցին առ նա Օմմ իշխանն Սահա-  
ռունեաց տոհմին , : ( Դպր . Ե . Գլ .  
ԼԵ . ) “ Եւ Բատ , որ նահապետն  
էր ազգին Սահառունեաց տոհմին , :  
( Դպր . Ե . Գլ . ԼԵ . ) “ Եւ կացոյց  
թագաւորն Սարազգատ 'ի գործ զօ-  
րավարութեան սպարապետութեանն  
զԲատ նահապետն Սահառունեաց  
տոհմին , :

Դարձեալ այս ալ յայտնի է որ իր  
գրութեան ոճոյն մէջ տեղ տեղ յունա-  
կան լեզուի հետք մը կը տեսնուի , զոր  
հանդերձ իրեն ամենայն ճարտարու-  
թեամբ չէ կրցած քօղարկել :

Իսկ մեր հարց պատմութեան վրայ  
ունեցած մանրամասն տեղեկութիւնքը  
զարմանալու բան մը չէ , մինչդեռ կե-  
նաց մէկ մեծ մասը Հայաստան անցու-  
ցեր էր , և այն ալ Ս . Երսէսի ձեռ-  
քին տակ , որ է ըսել արքունեաց մէջ  
կենալով . ուստի յայտնի է որ շատ դէպ-  
քերու յիշատակարանքը չէին պակսէր  
իրեն , և արդէն անոնց մէկ մասին ալ  
անձամբ ներկայ էր :

Յետ այսչափ հաւաստեաց , ոմանց  
կ'երևի թէ զՓաւստոս հայ համարե-  
լով , ազգային պարծանք մը կ'աւելցը-  
նեն . մեզի ալ , որ բնաւ չենք փափաքիր  
ունեցած ազգային պարծանքնիս նուա-  
զեցընել , այլ մանաւանդ թէ անոնց յի-



չատակն անմահացնելը մեզի միշտ քաղ-  
ցրը է , այնպէս կը տեսնուի որ զՓաւս-  
տոս հայ համարելէն աւելի՝ զինքը յոյն  
և հայկական դպրութեան վրայ սէր  
ձգած և իր հայոց պատմութիւնը հայե-  
րէն շարադրած սեպելն՝ աւելի պար-  
ծանք է ազգերնու և լեզուներնու ,  
քան թէ զինքը հայ դնել և այնպիսի  
ազգատեաց և ստայօդ պատմագիր մը  
ունենալ :

Վանք հիմա երկրորդ խնդրոյն , թէ  
արդեօք բնագիրը յունարէն թէ հայե-  
րէն գրուած է . առաջին խնդրոյն մէջ  
զՓաւստոս հաւանակտնաբար յոյն ցու-  
ցնելէն ետեւ , կարծես թէ բնական կը  
հետեւի թէ ուրեմն և յունարէն գրեր է  
իր պատմագրութիւնն ալ . բայց մեզի  
աւելի հաւաստի կը տեսնուի որ մեր ու-  
նեցած հայերէն օրինակը սկզբնագիր  
է քան թէ թարգմանուած , որովհետեւ  
այս բանիս ամենեւին հետք մը չենք  
տեսներ մէջը :

Իսկ թէ տեղ տեղ , թէպէտ և քիչ ,  
յունական ոճ մը տեսնուի , աւելի իր  
օտարազգի ըլլալուն հետեւանք մըն է ,  
ինչպէս որ առջի խնդրոյն մէջ պարզե-  
ցինք :

Իայց թէ յոյն մը թիչ պատճառէ  
զրգուեալ հայերէն գրեր է , ասոր ալ  
պատասխանը յայտնի է : Սիւթէ այս  
բանիս բաւական զրգիւ չէին իրեն  
Ս . Ներսիսէ տեսած այնչափ երախտի-  
քը . ասկէ զատ կարելի չէ՞ որ իր պաշ-  
տօնակից եպիսկոպոսներն իրմէն խըն-  
դրած ըլլան . և ասոր բնաւ արգելք  
մը չէր օտարազգի ըլլալը , մինչդեռ հայ  
արքունեաց մերձաւոր , հայոց կաթո-  
ղիկոսարանը Ս . Ներսէսի ձեռքին տակ  
կեցած , և շատ տարի հայ ժողովրդեան  
վրայ հսկեր էր : Սիւթէ հռոմայեցին  
Լքաթանդեղոս իրմէ առաջ չպատմա-  
գրեց ազգիս ի բրիտանիէութիւն դառ-  
նալը , առաջին կարգի ընտիր հայկաբան  
շարագրութեամբ . ասոր օրինակ չպակ-  
սիր նաեւ ուրիշ օտար ազգաց մէջ ալ :

Իայց աւելի խնդիր վերցընող բանն  
ան է , որ Վրոկոպիոս յոյն պատմագրին  
գրուածոյը մէջ այլ և այլ հատուածներ

կը գտնուին , Վատմութիւն հայոց ա-  
նունով զրքէ մը առնուած , համանման  
Փաւստոսի գրածներուն . սակայն ա-  
սով հայերէն գրած չըլլալը չհաստա-  
տուիր , այլ թէ կարելի է որ Ռուզանդ  
իր երկասիրութիւնը բուն հայերէն  
գրելով , բայց յունաց ալ զայն ծանօթա-  
ցնելու համար կամ նոյնը յունարէն  
թարգմաններ է , կամ թէ աւելի հաւա-  
նականաբար՝ նոյնը յունարէն ալ գրեր  
է : Ս ան զի շատ դժուարին կը տես-  
նուի որ մեր նախնեացմէ մէկը յանձն  
առած ըլլայ թարգմանել այսպիսի ազ-  
գերնու փառացը վրայ ստուեր մը ձգող  
պատմութիւն մը , մինչդեռ կրնար քիչ  
մ՝ ալ աշխատութիւն յանձն առնելով ,  
իբրեւ ստուգապատում վիպագիր , նոր  
պատմութիւն մը շարագրել , ինչպէս  
ըրեր է մեր Սովսէս Խորենացին :

Եթէ այս ըսածնիս , և եթէ ինչպէս  
ինչուան հիմա ցուցցինք , Փաւստո-  
սի անհաւատարիմ պատմագիր ըլլա-  
լը հաւաստելու համար , հոս քանի մը  
հատուածներու տեղեր կը նշանենք ,  
զոր ուսումնասէր ընթերցողք՝ եթէ ու-  
զեն թող անձամբ քննեն և տեսնեն ը-  
սածներնու ճշմարտութիւնը , միատեղ  
դնելով նաեւ Խորենացոյն նոյն կտոր-  
ները :

Ման Ս . Յուսկան .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . ԺԴ :  
Փաւս . Դպր . Գ . ԳԼ . ԺԲ :

Տիրանայ կոռոտրիւնը .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . ԺԵ :  
Փաւս . Դպր . Գ . ԳԼ . Ի :

Գնեյայ սպանոտրիւնը .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . ԻԳ :  
Փաւս . Դպր . Գ . ԳԼ . ԺԵ :

Ս . Ներսէսի աքսորանքը .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . Լ :  
Փաւս . Դպր . Գ . ԳԼ . Ե և Զ :

Աշխատանայ կոռոտրածը .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . ԻԶ :  
Փաւ . Դպր . Գ . ԳԼ . ԺԶ :

Զիրաշ դաշտիկ պատերազմը և Մերոշմանայ  
մահը .

Խոր . Գիւղք Գ . ԳԼ . ԼԶ :  
Փաւ . Դպր . Ե . ԳԼ . ԽԳ :



Բոննցմէ զատ դեռ խել մը անցը մէջ կը բերէ որոնք ստուգապատում պատմագրաց մէջ չկան, հապա միայն անոնց մէջ որոնք Փաւստոսէն ետե ու զելով քան զԵրրորդային աւելի բաներ պատմել, Բուզանդայ հետեւեր են :

Եւ մնայ արդ երրորդ խնդիրը, թէ արդեօք Բուզանդայ երկասիրութիւնք որ հիմա ունինք՝ ամբողջ են, վասն զի գիրքը երրորդ դպրութենէն կը սկսի :

Ուսումնասէր անձանց մտաց մէջ ծագած այս տարակոյսը ինքն իսկ Փաւստոս գուշակելով, երրորդ դպրութենէն առաջ նախագիտելիք մը կը դնէ այսպէս . “ Եւ չորս խոստմունս չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև ՚ի կատարած սորին, առ ՚ի զօգուտն ժառանգել՝ որք միանգամ կամին սրտի մը տօք հասու լինել սմին զօր ասելոցս եմ ” : Եւսկէ ետե դեռ երրորդ դպրութիւնը չսկսած Խաչիկէն կը դնէ, անշուշտ որպէս զի իր գրուածքը ձեռք առնողը՝ իր երկասիրութեան սկիզբը անկայ ըլլալուն վրայ չտարակուսի :

Եւ այց թէ արդեօք Փաւստոսի Ա և Բ սեպած դպրութիւններն իր թէ ուրիշ գրուածներն էին, ինքն իր գրոց սկիզբը համառօտ մը կը բացատրէ . (Դպր. Ա. գլ. Ա.) Եւ այս գրուածներէս մէկը անշուշտ կը համարէր կամ ՚ի երուբնայի երկասիրութիւնը, որ է Պատմութիւն Վարուց Բագարու և Սանատրկոյ, և կամ Բգաթանգեղեայ գիրքը, որուն ետեւէն ինքը կը շարունակէ . իսկ մէկալը թերեւս նոյն ժամանակի այն գրուածներէն մէկն էր, որոնց համար Երրորդային իր պատմութեան աղբիւրները յիշելու ատեն կ'ըսէ : “ Որչափ հնար էր, փախեաք յաւելորդ և ՚ի պաճուճեալ բանից, և որ ինչ յանհաւատին հայեր բանն և մտածութիւն . միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ և կամ ՚ի մէնջ՝ զարդարոյն և զձմարտի ” : Որոնց մէջ կրնայ դատուիլ նոյն ժամանակի թէ յունարէն և թէ հայերէն առասպելախառն գրուածներն, որոնցմէ անշուշտ

Պրոկոպիոս ալ առած առասպելախառն կը յիշատակէ Բագարու գործքերը : Եւ կամ աւելի հաւանականաբար Սուսեոի Երրորդային միւս ըսածը թէ, ուրիշ մըն ալ գրեց հայոց ազգիս պատմութիւնը, բայց գրութեան անոճ և անդէպ հանգամանացը համար ընդունելի չեղաւ ազգիս : Եւ կամ Փաւստոս՝ միւս պատմագիր ( ) ենթա ըսելով Վրայ կը կ'իմանար, որ նոյն միջոցները կ'իշնայ :

Որչափ որ հաւանական է որ Բուզանդայ երկասիրութեանց սկիզբն անթերի ըլլայ, ընդհակառակն յայտնի կը տեսնուի որ վեցերորդ դպրութեան վերջը պակասաւոր է : Որովհետեւ Զ խոստաբանութեան (ցուցակին) վերջը այսպէս կը դնէ . “ Ստորոտ ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք, տունք տասն՝ համարական թուօք ” . և ինքը դեռ պատմութեան վերջը չհասած, վեցերորդ գլխուն մէջ Փաւստոս անունով եպիսկոպոսի մը վրայ համառօտ յիշատակութեամբ մը կ'անցնի . և պատմութեան վերջը ամենեւին տեղեկութիւն մը չդնէր : Ուստի կարելի է որ իր պատմութեան վերջը, ուր իր վրայ տեղն ՚ի տեղ տեղեկութիւն պիտոր տար՝ այն դժբախտութեան հանդիպած ըլլայ՝ ինչ որ Սուսեոս Վերթողահօր՝ յինքն և ՚ի Սահակ Բագարատունի յաւելուածին համար կը զուրցուի : Եւ թէ ժամանակը, որ ամենայնի հնարագէտ է, Բուզանդայ այս վերջաբանութիւնն ալ հայրենասիրի մը երկայնամիտ տքնութեամբն օր մը ՚ի լոյս հանելու ըլլայ, անշուշտ այն ատեն այս ամէն տարակոյսնիս կը պարզուի, և թերեւս ոչ խիստ օտար հաւաստիք մը կ'ունենանք, քան ինչ որ մինչև հիմա ցուցցինք :

Եւս երեք խնդիրներս պարզելէն ետե, կը մնայ իր գրութեան ոճոյն վրայ գաղափար մը տալ մեր ընթերցողաց : Փաւստոս իր ամենայն թերութեամբն հանդերձ ոչ աննշան գրիչ մըն է մեր զրականութեան մէջ և ոչ ան-



գէտ բոլորովին ազգային պատմութեան, այլ մանաւանդ թէ կը տեսնուի որ շատ տեղեկութիւններ արքունի դիւաններէն հանած և աւանդած է, և տեղ տեղ այնպիսի հանգամանքներ երևան կ'ելլեն որ Սովսեփի Խորենացոյն սաստիկ համառօտութեամբ ծագած երկբայութիւնքը կը պարզաբանեն. դարձեալ շատ գաւառաց, քաղաքաց և գիւղից անուններ կ'աւանդէ, որոնք ուրիշ պատմագիրներու մէջ չեն գտնուիր:

Ստենագրական ոճն ընտիր հայկաբան է, բայց ոչ օրինակ տալու նորավարժ ուսանող տղոց: Պարսաւելի է նաև իր բառերու աւելորդ կրկնաբանութիւնը. ինչպէս մէկ բառով մեռածը՝ ըսելու տեղ, կը բարդէ. «զհրաժարեալն, զգնացեալն, զմեռեալն», կ'ըսէ. յաւիտենական ըսելու համար՝ կ'ըսէ. «Ինչպիսի, անսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակի տանջանաց գեհէնին, խաւարին, դատաստանին», և կ'ըսէ. «Ինչպիսի ըսելու տեղ»:

Սարժ բանիւքն համեստութեանն քրիստոսական խրատուն՝ հանապազ յերեսան յանդիմանութեամբ հարկանելով խրատելով կշտամբելով արկանէ, և այլն: Եւ այս ոճը խիստ ստեպ ալ բանեցընելուն համար ընթերցողաց տաղտուկ կը պատճառէ: Իսկ թէ մէկն ուզենայ իր սըտայօգ պատմութիւններուն գաղափար մը ունենալ, շատերէն քիչը թող երթայ կարգայ Դ գլխութեան մէջ հայոց Սասանի սպարապետին պատերազմները. մեռած զինուորներուն թիւը գումարէ և տեսնէ թէ արդեօք բոլոր Պարսկաստանի արանց և կանանց, ծերոց և տղայոց թիւը մէկտեղ առնելով անոնց կրնան հաւասարիլ. հոն կը տեսնէ նաև միշտ թշնամեաց կողմէն՝ Սասանայ սըրոյն հարուածէն և ոչ մէկ զինուոր մը խաղտիլը, այլ միայն Սերուստանայ ձի հեծնելով փախչիլը: Վարձեալ իբրև թէ (Դպր. Ե. գլ. 11.) Պարսից գերութենէն դարձող Սանուէլ անուանով անվանելի և մշտայաղթ զօրավարին յաղթութիւնները կը պատմէ, զորոնք ամենևին չեն յիշեր ոչ Խորենա-

ցին և ոչ Վազար փարպեցին. հոն կը դնէ նաև ուրացելոյն Սերուստանայ մահը, որուն՝ ըստ Խորենացոյն՝ թերևս մինչև այն ատեն հողոյն փոշին անգամ չէր մնացած: Իւրիշ խել մը ասոնց նման բաներէն ետքն ալ, Զ գլխութեան մէջ Յովհաննէս Եպիսկոպոսի մը ձիաւոր աւազակ մը երէց ընելուն պատմութիւնը կ'ընէ, անոր ձիուն աչք տնկելուն պատճառաւ, զորոնք աւելորդ կը սեպենք հոս դնելու: Իայց այսու ամենայնիւ չենք ուզեր այս ըստ այլ և այլ հանգամանաց համալուար մատենագիրն իր արժողութենէն զրկել, ճաննալով միշտ զինքը հայ պատմագրաց երևելիներէն մէկը:

Հուսկ յետոյ իր ոճոյն և հայկաբան շարագրութեանը ճաշակ մը տալու համար, ահա կը դնենք հոս ընտիր հատուած մը, որ ամբողջ պատմութեան մէջ գեղեցիկներէն մէկն է, և է Ինչու թէրդին մէջ Բըշակայ անձնասպանութիւնը:

«Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Իսորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինոյն Վրաստանատայն վաստակոյն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. խնդրեալ դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից: Եւ ասէ Վրաստանատ յթագաւորն. Ինձ 'ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զքնակ տէրն իմ զԲըշակ արքայ հայոց: Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա 'ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմութեան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջինորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ձիւղ: Եւ ասէ թագաւորն Շապուհ. Ինչիստ են խնդրուածքդ, զոր խնդրեսցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Ինյուշ բերդ կոչեցեալ է, չիք դժ մարդ եղեալ 'ի



մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցա-  
նել թագաւորաց զոր յայնմ բերդի ե-  
ղեալ զոր է թագաւորաց, յիշելով զայն  
մարդ՝ որ յայնմ բերդի զոր եղեալ է,  
թող թէ զնա զայր թագաւոր և զիմ  
ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի  
զհակառակորդն . քան մինչ աշխատ ա-  
րարեր զմեզ, և դու աւագիկ զանձն՝ ի  
մահ եղիր և յիշեցուցեր զԼ'նյուշն, որ  
ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորու-  
թեանս Լ'րեաց ի սկզբանէ : Իայց զի  
վասն՝ քո մեծ վաստակք են առ իս,  
զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լի-  
ցի քեզ . բայց քեզ արժան էր զօգուտ  
քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ  
գաւառս կամ զանձն : Իայց յորժամ  
դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօ-  
րինօք Լ'րեաց թագաւորութեանս .  
երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս  
խնդրեցեր փոխանակաց քոց :

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւա-  
տարիմ . և հրովարտակ՝ արքունի մա-  
տանեաւն, զի զնացեալ երթիցէ նա ի  
բերդն Ել'նդմըշն, և զիարդ և կամք  
իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝  
արասցէ կապելոյն Լ'ըշակայ, որ յա-  
ռաջ թագաւորեալն էր ի հայս : Եւ  
չոգաւ Դրաստամասն հանդերձ փշտի-  
պանաւն և հրովարտական արքունի  
Ել'նուշ բերդն, և ետես զտէրն բնակ .  
և արձակեաց զԼ'ըշակ ի կապանացն  
երկաթեաց ի ձեռակապացն և յոտիցն  
երկաթոց և յանրոց պարանոցէն շղ-  
թայիցն սարեացն . և լուաց զգլուխ նո-  
րա, և լոգացոյց զանձն նորա : Եւ ա-  
գոյց նմա պատմութեան ազնիւ . և էարկ  
նմա բազմականս, և բազմեցոյց զնա .  
և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրի-  
նաց թագաւորաց, և եդ առաջի նորա  
գինի որպէս օրէն էր թագաւորացն .  
սթափեաց զնա, և մխիթարեաց, և ու-  
րախ առնէր զնա գուսանօք :

Եւ ի ժամաղանդեր մատուցանելոյ՝  
եղին առաջի նորա միրգ, խնձոր և վա-  
րունգ և ամիճ՝ զի կերիցէ . և եղին  
դանակ նմա, որպէս զի հատցէ և կե-  
րիցէ զիարդ և կամեսցի : Եւ Դրաս-  
տամաս մեծապէս ուրախ առնէր զնա .

կայր յօտն, և մխիթարէր զնա : Իսկ  
յորժամ արբեցաւ, և գինին եկն զա-  
կամք նորա, արբեցաւ հպարտացաւ և  
ասէ . Ս'այ ինձ Լ'ըշակայ . այս ես և  
այս, և յայտ չափու և այս անցք անցին  
ընդ իս : Եւ զայս ասացեալ, զգանալն՝  
զոր ունէր ի ձեռինն, որով զմիրզն կամ  
զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի  
իւրում . և անդէն սատակեցաւ, և մե-  
ռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ  
կայր ի բազմականին : Իսկ յորժամ  
զայն ետես Դրաստամասն, յարձակե-  
ցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և  
եհար յիւրում կշտին . և անդէն մեռաւ  
և նա ի նմին ժամուն յայնմ : (Դպր .  
Ե . գլ . Է .)

### Չինաստանի պատերազմը :

Եւրոպիոյ երկու մեծագոր տէրու-  
թեց Չինաստան արշաւելն և այս առա-  
ջին անգամ Չին ազգն իր բնին մէջ դու-  
ղացնելն ու փոքրիկ ջոկատով մը ստուար  
բանակներ խորտակելով մինչև Բէքին  
մայրաքաղաքը հասնիլը՝ ծանօթ է բոլոր  
աշխարհի : Եւս բազմաքիրտն, բազմա-  
ծախ և երկարատե պատերազմին ար-  
դիւնքը Չինաստանի պէս անմատչելի  
ու ընդարձակ աշխարհքի մը դռները  
բանալ տուաւ որ և իցէ ազգաց դիմացն՝  
որոնք ազատութիւն պիտի ունենան  
ասկէ վերջը, ըստ զօրութեան անցեալ  
տարուան դաշնադրութեան, համար-  
ձակ Չինու հետ վերաբերութիւններ  
ունենալ, որուն ինչ աստիճանի օգտա-  
կար ու շահաւոր արգասիք մը ունենալը՝  
թէ վաճառականութեան և թէ քրիս-  
տոնէութեան նկատմամբ՝ աւելորդ է  
ըսելը . բայց իբրև հետաքննականնիւթ  
մը, դաշնակցաց Բէքինի վրայ քալելն  
ու զայն գրաւելը, թարգմանաբար կը  
դնենք Բազմավիպիս մէջ՝ զոր տեղն ի  
տեղը գրած է Ս'ոնդուպան՝ Գաղղիա-  
ցոց ճենական բանակին սպարապետը՝  
առ պատերազմի պաշտօնեայն Գաղ-  
ղիոյ . և է այս հետեւեալ նամակս :